

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
01.03.2018թ. թիվ 107-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝
Արա Զոհրաբյան

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈՒՍԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Պլաստիկ քարտի ձևը.

1) Փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող քարտը (այսուհետ՝ Պլաստիկ քարտ) պատրաստվում է անհատականացնող էլեկտրոնային կրիչ պարունակող պլաստիկ նյութից՝ 54 X 86 մմ չափսերով, բեժ գույնի մի քանի երանգների համադրությամբ ետնաֆոնով, որին պատկերված են օղակաձև և ալիքաձև գրաֆիկական նախշեր.

2) Պլաստիկ քարտի դիմերեսը և դարձերեսը՝

ԴԻՄԵՐԵՍ



ԴԱՐՁԵՐԵՍ



2. Պլաստիկ քարտի նկարագիրը.

1) Դիմերեսը հայերեն և անգլերեն լեզուներով պարունակում է «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ», «Վկայական» և «Փաստաբան» գրառումները, ինչպես նաև փաստաբանի անունը և ազգանունը, իսկ Պալատում վարվող փաստաբանների ցուցակում փաստաբանի անվան և ազգանվան համընկնման դեպքում միայն հայերեն տարբերակում նշվում է նաև փաստաբանի հայրանունը.

2) Դիմերեսը՝ «№» նշագրումից հետո, ներառում է փաստաբանի վկայականի համարը.

3) Դիմերեսի վերին աջ անկյունում պատկերված է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդանշանը.

4) Դիմերեսին ամրագրվում է փաստաբանի գունավոր լուսանկարը՝ 30X25 մմ չափսերով.

5) Դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կնիքը.

6) Դարձերեսը հայերեն և անգլերեն լեզուներով պարունակում է «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ» և «Փաստաբանական գործունեության արտոնագիր» գրառումները, ինչպես նաև փաստաբանի անունը և ազգանունը, արտոնագրի տրման ամսաթվի և գործողության ժամկետի վերաբերյալ նշումները.

7) Դարձերեսի վերին աջ անկյունում պատկերված է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդանշանը.

8) Դարձերեսը՝ «№» նշագրումից հետո, ներառում է փաստաբանի արտոնագրի համարը.

9) Դարձերեսին առկա է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի անվան և ազգանվան նշումը, ինչպես նաև պատկերված է վերջինիս ստորագրությունը և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կնիքը.

10) Դարձերեսին ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի համացանցային պաշտոնական կայքում փաստաբանի անձնական էջի ակտիվ հղումը՝ QR կոդի տեսքով:

* * *